

հոգուն համար, մի սահմանափակվե՞ք անոր կամքը»: Ես ալ նոյն բառերը կը կրկնեմ իրենց. «Բանաստեղծը ազատ է գրելու, ես ալ ազատ եմ քննադատելու»:

Բանաստեղծի հոգին մեծ դաշնամուր մը, հսկայ երգեհոն մըն է, որուն մէջ ոչ թէ 4-5 ութնեակ կայ, այլ հարիւրաւոր ութնեակներ: Այդ երգեհոն-հոգին պիտի արձագանգէ կեանքի ամէն պատահարները, մանաւանդ անոր մէջ տիրող խտէրերը, ձգտումներն ու զգացումները: Այդպէս է Վարուժանի քնարը:

Չքնաղ *Լալագէի*, ճոխ եւ փարթամ *Հարճի* եւ այլ քիչ մը *վրան բաց* քերթուածներու կողքին՝ Վարուժանի գրուածքներուն մէջ կը փայլին հոգեզմայլ շողշողիւնով քանի մը պարզ անպաճոյճ գոհարներ, ինչպէս *Առկայծ ճրագը*, որ ճշմարիտ տաղանդի գործ է, պարզ, անպաճոյճ, ինչպէս Ս. Գիրքի լեզուն, դիւրըմբռնելի՛ ինչպէս Հոմերոսի ոճն ու պատկերները:

Բանաստեղծը դրոշմեր է իր գրքին ճակատը.

*Ես կ'երգեմ Գինին. – բազիններուն ծիծաղը
Եւ խորաններուն արհւնը:*

*Դարերու Կեանքը կ'երգեմ յանուն հաճոյքի եւ
տառապանքի գեղեցկութեան:*

Մարդ մը, Մուսայի գաւակ մը որ ընդունակ է զգալու «տառապանքի գեղեցկութիւնը», չէր կրնար չարձագանգել հայութեան ամենօրեայ տառապանքները: Ու Վարուժան արձագանգեց. անոր երգերը ժայթքեցին *Յեղին սիրտը՝* իր տոհմական ցաւերու մերթ տխուր, մերթ մոայլ շեշտերովը:

Ատ *հասարակական ջիղն* էր որ առաջին քայլերէն իսկ երեւան եկաւ մեր սիրած երիտասարդ բանաստեղծի մէջ:

Յովհաննէս Թումանեան իր մէկ սիրուն գրուածքի մէջ կը պատկերացնէ կովկասեան ինչոյք մը. սեղանապետը նստած է գինիի բաժակը ձեռքը, շրջապատուած իրեն պէս ձերունիներով, իսկ դիմացը՝ յարգանօք կանգնած են պատանիները: Ծերունին խօսքը կ'ուղղէ փոքրերուն եւ կ'ըսէ.

«Ապրիք, որդիք, բայց ոչ մեզ ապրիք»²⁸: